

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՄԱՐԱՆ**

ՄՈՒՐԱԴՑԱՆ ՄՎԵՏԼԱՆԱ ՍԵՐԳԵՅԻ

**ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐՈՎ
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՏԱԲԵՐԱԿԱՆ
ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ
ՄԵԹՈԴՆԵՐԸ**

**ԺԳ.00.03 <<Հատուկ մանկավարժություն>> մասնագիտությամբ
մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության**

ՄԵՂՄԱԳԻՐ

Երևան - 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝

Մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Ռ. Ն. Ագարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Մ. Մ. Մանուկյան

Մանկավարժական գիտությունների
թեկնածու Ա. Վ. Յայլոյան

Առաջատար կազմակերպություն՝

Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թ. հունիսի 16-ին,
ժամը 12⁰⁰-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի <<Մանկավարժություն>> 020
մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2016թ. մայիսի 16-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Ա. Հ. Սվաջյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հայտնի է, որ նախադպրոցական տարիքն իր կարևորագույն նշանակությունն ունի ինչպես բնականոն զարգացում ունեցող, այնպես էլ լսողության խանգարում ունեցող երեխաների զարգացման գործընթացում: Լսողության խանգարումը բացասաբար է ազդում և դժվարեցնում է խոսքի ձևավորումն ու զարգացումը, գիտելիքների յուրացումն ու խոսքային հաղորդակցումը, անձի ընդհանուր զարգացումը: Այդ իսկ պատճառով վաղ և նախադպրոցական տարիքում լսողության խանգարում ունեցող երեխաների հոգեկանի զարգացման տարբեր կողմերը եղել են բազում հեղինակների (Մ. Ի. Շիֆ 1968, Է. Ի. Լեոնգարդ 1991, Ե. Ի. Յիսենինա 1999, Լ. Ա. Գոլովչից 2001, 2003, Լ. Ս. Վիգորսկի 2003, Ռ. Ս. Բոսկիս 2004, Ռ. Ռ. Ֆյուել 2005, Ե. Ս. Ժիլինսկեն 2006 և այլոք) գիտական հետազոտությունների առարկա, որի արդյունքում օրեցօր կատարելագործվում են սուրդոմանկավարժական աշխատանքի մեթոդները, միջոցներն ու մանկավարժական պայմանները:

Նշելով հայ հեղինակների (Լ. Ա. Բաբայան, 2003, Ա. Վ. Մանուկյան 2002, 2008, Ի. Ա. Հարությունյան, 2006) կատարած հետազոտությունների մեծ դերն ու նշանակությունը՝ հարկ ենք համարում ընդգծել այն փաստը, որ լսողության խանգարում ունեցող երեխաների արտաբերության ձևավորման և զարգացման խնդրի շուրջ բազմաթիվ հարցեր դեռևս չեն ստացել իրենց արժանի գիտական հիմնավորումն ու գործնական լուսաբանումը: Մասնավորապես, վերլուծված չէ աշխատանքի արդի վիճակը, բացահայտված չեն առկա խնդիրները, լուսաբանված չեն լսողության խանգարում ունեցող երեխաների արտաբերական կարողությունների գնահատման և արդյունքների գրանցման քարտեր (սանդղակներ), մշակված չեն այս երեխաների արտաբերական կարողությունների զարգացմանը նպաստող հայալեզու համակարգչային խաղ – ծրագրեր:

Ներկայումս ՀՀ –ում համակարգչային նորագույն լուծումների լայնածավալ կիրառության պայմաններում լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտասանության ձևավորմանն ու զարգացմանը նպաստող հատուկ համակարգչային խաղերի բովանդակության, դրա կիրառման համար հատուկ պայմանների բացակայության փաստը նկատելիորեն դժվարեցնում է այս երեխաների բանավոր խոսքի լիարժեք զարգացումը: Վերը ներկայացրածն էլ որոշում է հետազոտման խնդրի բավականին արդիական լինելը:

Հետևաբար՝ լսողության խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների արտասանության ձևավորման և զարգացման ուղղությամբ տարվող սուրդոմանկավարժական աշխատանքի հիմնական ուղղվածության, սկզբունքների, դրույթների և բովանդակության, այդ թվում համակարգչային խաղ – ծրագրերի, այս երեխաների արտաբերական կարողությունների գնահատման և արդյունքների գրանցման համար նախատեսված քարտերի (սանդղակներ) մշակումը և դրանց արդյունավետության փորձարարական հիմնավորումը

հանդիսանում է արդիական, տեսականորեն, գործնականորեն և սոցիալապես նշանակալի:

Հետազոտության նպատակն է՝ մշակել լսողության խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների արտաբերության զարգացման միջոցներ և մեթոդներ:

Հետազոտության օբյեկտն է՝ լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության զարգացման գործընթացը:

Հետազոտության առարկան է՝ լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության զարգացման բովանդակությունը, միջոցներն ու մեթոդական մոտեցումները:

Հետազոտության վարկածը. մենք ենթադրել ենք, որ լսողության խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների արտաբերության զարգացումն առավել արդյունավետ կլինի, եթե այն ընթանա հետևյալ պայմաններում.

- մեր կողմից առաջարկված և փորձարարությամբ հիմնավորված համակարգչային խաղ - ծրագրի, օրինակելի վարժությունների, հանձնարարությունների, խաղերի և դրանց անցկացման մեթոդական մոտեցումների կիրառում,

- լսողության խանգարման աստիճանի և բնույթի հաշվառման պայմաններում արտաբերական կարողությունների գնահատման քարտի կիրառում, նախադպրոցականների արտաբերության փուլային զարգացում:

Հետազոտության հիմնական խնդիրները.

1. ուսումնասիրել լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության զարգացման ժամանակակից մոտեցումները,

2. բացահայտել լսողության խանգարում ունեցող երեխաների արտասանության ուսուցման առանձնահատկությունները հատուկ հաստատություններում,

3. որոշել լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության զարգացման մակարդակը,

4. մշակել լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության զարգացման միջոցներն ու մեթոդները և փորձարարությամբ հիմնավորել դրանց արդյունավետությունը:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել՝

- գործողությունների ու հասկացությունների փուլային ձևավորման տեսություն (Ս. Я. Гальперин, 1985),

- փոխհատուցման տեսություն (Л. С. Выготский, 2003),

- գրավոր և բանավոր խոսքի զարգացման տեսություն (Д. Б. Эльконин, 1980; Т. И. Обухова, 1993),

- լսողության խանգարում ունեցող երեխաների արտաբերման ունակությունների զարգացման մեթոդիկա (К. А. Волкова, 1980; Э. И. Леонгард, 1991),

• վաղ և նախադպրոցական տարիքի լսողության խանգարում ունեցող երեխաների խոսքի ձևավորման և զարգացման տեսություն (Н. И. Белова, 1985; Э. И. Леонгард, 1991; Н. Д. Шматко, 2001, 2003; А. В. Манукян, 2012):

Հետազոտության մեթոդները.

• հետազոտվող հիմնախնդրի վերաբերյալ գիտամեթոդական գրականության ուսումնասիրություն, վերլուծություն և տեսական ընդհանրացում,

• լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության զարգացմանը նպաստող սուրդումանկավարժների և դաստիարակների աշխատանքի առաջատար փորձի ուսումնասիրում և ընդհանրացում,

• հետազոտվողների բժշկական փաստաթղթերի ուսումնասիրում և վերլուծություն,

• հոգեբանամանկավարժական հետազոտման մեթոդներ՝ դիտում, հարցում, գրույց, անկետավորում,

• հետազոտման սուրդումանկավարժական մեթոդներ՝ բանավոր խոսքի մեթոդ,

• հետազոտման փորձարարական մեթոդներ՝ հավաստացող, ձևավորող, մանկավարժական գիտափորձ,

• մաթեմատիկական վիճակագրության մեթոդ:

Հետազոտությունն իրականացվել է **երեք փոխկապակցված փուլերով:**

Առաջին՝ կազմակերպչական փուլի ընթացքում (2009-2010թթ.)

ուսումնասիրվել է հետազոտության հիմնախնդրի աշխատանքի դրվածքը: Տեսականորեն վերլուծվել է հիմնախնդիրը, նրա ուսումնասիրվածության, մշակվածության և լուսաբանվածության աստիճանը հատուկ գրականության մեջ: Ստացված արդյունքների հիման վրա որոշվել և հստակեցվել է ատենախոսական աշխատանքի օբյեկտը, առարկան, վարկածը, նպատակն ու խնդիրները, ընտրվել են մեթոդները, մշակվել է պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Երկրորդ՝ փորձարարական փուլի ընթացքում (2010-2013թթ.)

կատարվել է հիմնախնդրի տեսական և գործնական հետազոտություն, անց է կացվել փորձարարական ուսումնասիրություններ. որոշվել է լսողության խանգարում ունեցող երեխաների արտաբերական կարողությունների զարգացման մակարդակը, ուսումնասիրվել է սուրդումանկավարժների, բարձր կուրսի ուսանողների իրազեկվածության աստիճանը ուսումնասիրվող հիմնախնդրի շուրջ:

Հետազոտությանը մասնակցել են լսողության խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի 103 երեխա, որից 76՝ հավաստացող, 27՝ ուսուցանող գիտափորձերին: Հարցմանը մասնակցել են 168 մասնագետներ (սուրդումանկավարժներ, լոգոպեդներ, հատուկ հոգեբաններ, սոցիալական աշխատողներ), ՀՊՄՀ-ի հատուկ կրթության ֆակուլտետի բարձր կուրսի 102 ուսանողներ և 96 լսողության խանգարում ունեցող երեխաների ծնողներ:

Հետազոտության **երրորդ**՝ եզրափակիչ փուլում (2013-2014թթ.) կատարվել է փորձարարական ուսումնասիրությունների արդյունքների, տվյալների մաթեմատիկական մշակում և վիճակագրական վերլուծություն: Այս փուլում կատարվել է նաև ատենախոսության տեքստի ձևակերպում, քննարկում և նախնական պաշտպանություն:

Հետազոտության գիտական նորույթ

- վերլուծվել է լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերական կարողությունների ուղղությամբ սուրդոմանկավարժական աշխատանքի խնդիրները հատուկ հաստատություններում,
- վերլուծվել է լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության զարգացման ուղղությամբ կազմակերպվող սուրդոմանկավարժական աշխատանքի դրվածքը հատուկ հաստատություններում,
- մշակվել է լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերական կարողությունների գնահատման քարտ (սանդղակ),
- մշակվել է լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության զարգացմանը նպաստող համակարգչային խաղեր, հատուկ վարժություններ, հանձնարարություններ և փորձարկմամբ հիմնավորվել է դրանց կիրառման արդյունավետությունը:

Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ ճշգրտվել և լրացվել են տեղեկություններ լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերման կարողությունների զարգացման համար առաջարկված միջոցների, մեթոդների և դրանց կիրառման պայմանների, ինչպես նաև ստացված արդյունքների մասին:

Հետազոտության գործնական նշանակությունը:

Վերլուծվել է Հայաստանի մասնագիտացված կենտրոններում սուրդոմանկավարժական աշխատանքի արդի վիճակը, բացահայտվել են առկա խնդիրներն ու դրանց պատճառները: Մշակվել և գործնական պարապմունքներում ներդրվել է լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերական կարողությունների զարգացմանը նպաստող համակարգչային խաղեր, հատուկ վարժություններ, հանձնարարություններ, ինչպես նաև արտաբերական կարողությունների գնահատման քարտ: Փորձարարությամբ ապացուցվել է սուրդոմանկավարժական աշխատանքի կատարելագործման համար մեր կողմից մշակված միջոցների, մեթոդների և դրանց կիրառման պայմանների մշակման արդյունավետությունը:

Ուշապանության և ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Սուրդոմանկավարժական աշխատանքը Հայաստանի մասնագիտացված հաստատություններում ունի մի շարք խնդիրներ կապված լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերական կարողությունների ձևավորման և զարգացման հետ (գնահատման քարտերի, համակարգչային խաղերի բացակայություն և այլն), որոնք բացասականորեն են ազդում այս

երեխաների արտաբերության, խոսքի, լսողական ընկալման և, առհասարակ, երեխայի ընդհանուր զարգացման վրա:

2. Լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության զարգացմանը նպաստող համակարգչային խաղեր, վարժություններ, հանձնարարություններ, արտաբերական կարողությունների գնահատման քարտ (սանդղակ):

3. Առաջարկված միջոցներն ու մեթոդները նպաստում են լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերական կարողությունների զարգացմանը:

Արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովված է հետազոտության անցկացման ծավալով, հետազոտվողների բավարար քանակով, ժամանակակից և դրված խնդիրներին համապատասխանող հետազոտական մեթոդների կիրառմամբ և փաստային նյութի մանրամասն ու ճշգրիտ մաթեմատիկական մշակմամբ, ինչպես նաև 2011-2016թթ. հրապարակված 10 աշխատություններով:

Աշխատանքի արդյունքների փորձարկումը: Հետազոտության արդյունքները, հիմնական դրույթները և հետևությունները զեկուցվել և քննարկվել են Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի և լրգույեղիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի համատեղ նիստերում (2011 – 2014թթ), Արաբկիր ԲՀ ԵԴԱԻ-ին կից գործող «Հավատ» ՀԿ «Վատ լսող երեխաների վերականգնողական կենտրոնում», մինևույն կենտրոնի Արարատ մարզի (ք. Արտաշատ) մասնաճյուղում (2012 – 2013թթ), ինչպես նաև հեղինակի կողմից հրատարակված աշխատություններում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսությունը շարադրված է համակարգչային 149 էջում, ներառում է 7 աղյուսակ, 10 նկար և 6 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածության** մեջ հիմնավորված է հետազոտության արդիականությունը, նպատակը, օբյեկտը, առարկան, գիտական վարկածը, սահմանված են հետազոտության խնդիրները, մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության՝ **«Հիմնախնդրի դրվածքը, հետազոտության խնդիրները, մեթոդներն ու կազմակերպումը»** խորագիրը կրող առաջին գլուխը բաղկացած է չորս ենթադրվածից:

«Լսողության խանգարում ունեցող երեխաների խոսքի և արտաբերության զարգացման մոտեցումների պատմական վերլուծություն»

խորագրով առաջին ենթագլխում անդրադարձել ենք լսողության խանգարում ունեցող երեխաների խոսքի և արտաբերության զարգացման գործընթացի պատմական զարգացման վերլուծությանը, մեկնաբանվել է գոյություն ունեցող մանկավարժական ուղղությունները: Ներկայացվել է պատմության զարգացման ընթացքում, լսողության խանգարում ունեցող երեխաների արտաբերական կարողությունների զարգացմանը նպաստող տարբեր մեթոդների վերլուծությունը:

<<Արտաբերության էությունն ու բնութագիրը>> խորագրով երկրորդ ենթագլխում ներկայացված է խոսքի՝ որպես հաղորդակցման միջոցի և արտաբերության բնութագիրը, վերլուծվել է լսողության բնականոր զարգացում ունեցող և լսողության խանգարում ունեցող երեխաների խոսքի և արտաբերության ձևավորման և զարգացման համեմատական բնութագիրը, շարադրվել է արտասանությունը բնութագրող կարողությունների (հնչերանգի, ձայնի ուժի, ձայնի ուժգնության, խոսքային շնչառության, երկարատև արտաշնչման, արտաշնչման փուլում խոսքի ձևավորման, հնչարտաբերման և այլնի) ձևավորման և արտահայտման առանձնահատկությունները:

<<Լսողության խանգարում ունեցող երեխաների արտաբերության ձևավորման և զարգացման առանձնահատկությունները>> խորագրով երրորդ ենթագլխում շարադրված է այս երեխաների արտաբերության ձևավորման և զարգացման առանձնահատկությունները, լսողության և արտաբերության միջև գործող սերտ կապն ու նշանակությունը: Ներկայացված է խոսքի ընկալման մակարդակները կախված լսողության իջեցման աստիճանից, մեկնաբանված է խոսքի, արտաբերության և լսողության զարգացման գործընթացում վաղ լսողապրոթեզավորման դերն ու նշանակությունը:

<<Հետազոտության հիմնական ուղղվածությունը, խնդիրները, մեթոդներն ու անցկացման փուլերը>> խորագրով չորրորդ ենթագլխում հիմնավորված է հետազոտության հիմնական ուղղվածությունը, համաձայն որի ներկայացված հիմնախնդիրը արդիական է, սակայն ոչ լիարժեք ուսումնասիրված մեր երկրում, որն էլ դժվարեցնում է այս երեխաների արտաբերական կարողությունների ձևավորումն ու զարգացումը: Հիմնախնդրի ուսումնասիրումը հնարավորություն կընձեռի այդ աշխատանքների դրվածքի կատարելագործմանը: Նկարագրված է նաև հետազոտության իրականացման երեք փուլերը:

Ատենախոսության **<<Լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության զարգացման առանձնահատկությունների հետազոտում>>** խորագիրը կրող երկրորդ գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից և գլխի ամփոփումից:

<<Լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության ուսուցման ծրագրերի վերլուծություն>> խորագրով առաջին ենթագլխում ներկայացված է լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության ուսուցման վերաբերյալ 1983-2007թթ. գոյություն ունեցող ծրագրերի վերլուծությունը: Կարևորելով վերլուծված ծրագրերի դրական

կողմերը՝ առանձնացրել ենք ոչ բավարար լուծում ստացած մի շարք հարցեր (բացակայում է լսողության խանգարումներ ունեցող նախադպրոցականների արտաբերման զարգացմանն ուղղված միջառարկայական կապերը, արտաբերման զարգացման համակարգային մոտեցումը, լսողական ընկալման հիման վրա արտաբերման զարգացման աշխատանքների ընդլայնումը, արտաբերման ուսուցման բաժնի բովանդակությունը կարիք ունի ընդլայնման և հարստացման):

<<Լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության զարգացման աշխատանքի դրվածքի վերլուծություն>> երկրորդ ենթագլխում շարադրված է հանրապետության մասնագիտացված հաստատություններում այդ երեխաների արտասանության զարգացմանն ուղղությամբ կազմակերպվող աշխատանքի դրվածքը: Հետազոտության արդյունքները վկայում են այն մասին, որ չնայած լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության ձևավորման և զարգացմանն ուղղությամբ տարվում է մեծ աշխատանք, բայց, այնուամենայնիվ, մնում են բազում չլուծված հարցեր՝ հատուկ փորձարարությամբ մշակված և գիտականորեն հիմնավորված ծրագրերի, երեխաների արտաբերական կարողությունների գնահատման և արդյունքների գրանցման քարտի, լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության զարգացմանը նպաստող համակարգչային խաղերի բացակայություն, ծնողների համար գործնական խորհուրդների և մեթոդական մոտեցումների ընդլայնման անհրաժեշտություն:

<<Լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության զարգացման վերաբերյալ սուրդումանկավարժների իրազեկվածության մակարդակի ուսումնասիրում>> խորագրով երրորդ ենթագլխում ներկայացված է 168 մասնագետների (սուրդումանկավարժներ, հատուկ մասնագետներ, հատուկ հոգեբաններ, լոգոպեդներ, սոց. աշխատողներ), 96 ծնողների և Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հատուկ կրթության ֆակուլտետի <<Սուրդումանկավարժություն>> բաժնի բարձր կուրսի 102 ուսանողների հարցման, գրույցի, անկետավորման արդյունքները: Հետազոտության տվյալները փաստում են, որ մասնագետները (94,6%), ուսանողները (68,7%) կարևորում են լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանն աշխատանքների վաղ կազմակերպումն ու անցկացումը: Դրա հետ մեկտեղ նշում են, որ այս ուղղությամբ աշխատանքները թերի են իրականացվում՝ ընդգծելով հատուկ միջոցների, մեթոդների և դրանց կիրառման պայմանների մշակման անհրաժեշտությունը:

<<Լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության զարգացման մակարդակի բնութագիրը>> խորագրով չորրորդ ենթագլխում շարադրված է 3-6 տարեկան III-IV^o -ի (30 –ը՝ III^o, իսկ 46 –ը՝ IV^o) լսողության խանգարում ունեցող 76 երեխայի արտաբերության զարգացման մակարդակի բնութագիրը: Համաձայն ստացված արդյունքների հետազոտ-

վողների մեծ մասին բնութագրական էր արտաբերության հիմնական կարողությունների՝ խոսքային շնչառության, ձայնի կարգավորման, հնչարտաբերման, խոսքի առոգանաարտահայտական կողմի տարաբնույթ խանգարումներ:

Վերը ներկայացվածը վկայում է լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերական կարողությունների ձևավորման և զարգացման միջոցների, մեթոդների մշակման անհրաժեշտության մասին, որոնք կնպաստեն այս երեխաների արտաբերության ձևավորմանն ու զարգացմանը, հետաքրքրությունների շրջանակի ընդլայնմանը:

Ատենախոսության՝ << **Լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության զարգացման միջոցներն ու մեթոդները**>> խորագիրը կրող երրորդ գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից և գլխի ամփոփումից:

<< **Լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության ձևավորման և զարգացման հիմնական ուղղվածությունը, գործոնները և սուրդոմանկավարժական աշխատանքի բովանդակությունը**>> խորագրով առաջին ենթագլխում շարադրված է լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության ձևավորման և զարգացման աշխատանքի հիմնական ուղղվածությունը, գործոնները և սուրդոմանկավարժական աշխատանքի բովանդակությունը: Հենվելով գիտատեսական տվյալների և սեփական աշխատանքային փորձի վրա՝ կարևորում ենք այն հանգամանքը, որ լսողության խանգարում ունեցող երեխաների ճիշտ արտաբերության կարողությունների ձևավորմանը նպաստող սուրդոմանկավարժական աշխատանքները առաջնահերթ պետք է ուղղված լինեն.

- մշակելու լսողության խանգարում ունեցող երեխաների արտաբերական կարողությունների գնահատման քարտ,
- որոշել հանրապետության մասնագիտացված հաստատություններում լսողության խանգարում ունեցող երեխաների արտաբերական կարողությունների զարգացման մակարդակը,
- մշակել համակարգչային խաղեր նախատեսված լսողության խանգարում ունեցող երեխաների արտաբերական կարողությունների ձևավորմանն ու զարգացման համար:

<< **Լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության ձևավորմանն ու զարգացմանը նպաստող սուրդոմանկավարժական աշխատանքի հիմնական սկզբունքներն ու դրույթները**>> խորագրով երկրորդ ենթագլխում մեկնաբանված է այս երեխաների արտաբերության ձևավորմանն ու զարգացմանը նպաստող սուրդոմանկավարժական աշխատանքի հիմնական սկզբունքներն ու դրույթները:

Ներկայացվել է այս երեխաների արտաբերման կարողությունների զարգացման և ամրապնդման համար պահանջվող իրական գործնական խոսքային իրավիճակների կազմակերպման օրինակելի նյութ.

- խոսքային շփման իրավիճակներ, որտեղ պահանջվում է փոփոխել արտաշնչվող օդի տևողությունը, օդի հոսքի ուղղությունը, ձայնի տևողությունը, ուժն ու բարձրությունը, խոսքի տեմպը, ռիթմը, հնչերանգը,

- օրինակելի խոսքային իրավիճակներ, որոնք պահանջում են դիմելաձևի, խոսելաձևի, ողջույնի խոսքերի, հարց ու պատասխանի կազմակերպում,

- խոսքային իրավիճակներ, որտեղ պահանջվում է գործունեության տարբեր իրավիճակներում վերահսկել հիմնական հնչյունների ճիշտ արտաբերությունը:

Իրական խաղային իրավիճակների կազմակերպման ու անցկացման ընթացքում հաշվի է առնվել հետևյալ բարդությունները.

- երեխաների տարիքն ու լսողության խանգարման բնույթը,

- զարգացման երկրորդային խանգարումները,

- խոսքի անբավարար զարգացումն ու, համապատասխանաբար, աղքատ բառապաշարը,

- արտաբերության զարգացման ոլորտում գործնական փորձի բացակայությունը,

- լսողության խանգարում ունեցող նախադպրոցական տարիքի երեխաների ճիշտ արտաբերության զարգացման համար իրական խոսքային իրավիճակների ստեղծման վերաբերյալ մեթոդական գրականության բացակայությունը,

- լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների ճիշտ արտաբերության կարողությունների ամրապնդման համար իրական խոսքային իրավիճակների կազմակերպման և անցկացման վերաբերյալ դաստիարակների անբավարար իրազեկվածությունը:

Կազմակերպվող սուրդոմանկավարժական աշխատանքի անցկացման արդյունավետության ապահովման նպատակով մեր կողմից մշակվել է լսողության խանգարում ունեցող երեխաների արտաբերական կարողությունների զարգացմանը նպաստող համակարգչային խաղ - ծրագիր:

<<Լսողության խանգարում ունեցող երեխաների արտաբերության զարգացմանը նպաստող համակարգչային խաղ-ծրագիր>> խորագրով երրորդ ենթագլխում ներկայացված է մեր կողմից մշակված <<Զարգանում ենք խաղալով>> հայալեզու համակարգչային խաղ-ծրագիրը:

Բացի այդ ներկայացվել է երեխաների արտաբերության մակարդակի ուսումնասիրման, արդյունքների գրանցման նպատակով մեր կողմից մշակված <<Լսողության խանգարումով երեխաների արտաբերական կարողությունների գնահատման քարտ>>-ը, որը 2012թ-ից մինչ օրս իր գործնական կիրառությունն է ստացել Արաբկիր ԲՀ ԵԴԱԻ-ին կից գործող <<Հավատ>> ՀԿ <<Վատ լսող երեխաների վերականգնողական կենտրոն>>-ի առաջատար մասնագետների կողմից:

Այս ենթագլխում ներկայացվել և վերլուծվել է առաջարկված հեղինակային համակարգչային խաղերն ու խաղային հանձնարարությունները, ինչպես նաև դրանց գնահատման համակարգը:

Մեր կողմից առաջարկված համակարգչային խաղերի, հատուկ վարժությունների ու հանձնարարությունների արդյունավետության հիմնավորման նպատակով մինևույն կենտրոնում կազմակերպվել է ութամսյա փորձարարական ուսումնասիրություն, որին մասնակցել են III - IV^o -ի երկկողմանի լսողության խանգարում ունեցող 3-6 տարեկան երեխաներ: Մտացված արդյունքները ներկայացված և վերլուծված են հաջորդ ենթագլխում:

<<Լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության զարգացմանը նպաստող առաջարկված մոտեցումների արդյունավետության փորձարարական հիմնավորում>> խորագրով չորրորդ ենթագլխում ներկայացված է Արաբկիր ԲՀ ԵԴԱԻ-ին կից գործող <<Հավաստ>> ՀԿ <<Վատ լսող երեխաների վերականգնողական կենտրոնում>> 2010-2012թթ ընթացքում մեր կողմից իրականացված փորձարարական ուսումնասիրությունների արդյունքները: Ութամսյա մանկավարժական գիտափորձին մասնակցել են 27 (III^o-10, IV^o-17) լսողության խանգարում ունեցող 5 տարեկան երեխա, որից 14-ը ներառվել են փորձարարական, իսկ 13-ը՝ ստուգողական խմբում:

Վերը ներկայացված երկու խմբում էլ ընդգրկվել էին այնպիսի երեխաներ, որոնք միմյանց գրեթե համապատասխանում էին ըստ տարիքի, սեռի, լսողության կորստի աստիճանի, լսողության խանգարման առաջացման ժամանակի, խոսքի զարգացման և ընդհանուր հոգեֆիզիկական զարգացման մակարդակի ցուցանիշներով:

Աշխատանքի ընթացքում ներկայացվել և վերլուծվել է արտաբերական կարողությունների (խոսքային շնչառություն, ձայնի կարգավորում, հիմնական հնչյունների արտաբերում, խոսքի առոգանաարտահայտչական կողմ) զարգացման մակարդակի փոփոխությունները, որը որոշելու համար կիրառվել է մեր կողմից ընտրված, մշակված և համակարգված հատուկ համակարգչային խաղեր, խոսքային վարժություններ, հանձնարարություններ, իրական և արհեստական իրավիճակներ: Փորձարարական ուսումնասիրության տարբեր փուլերում արդյունքները ներկայացվել են մեր կողմից մշակված և կազմված արտաբերական կարողությունների գնահատման քարտում:

Ներկայացվել է ուսումնասիրության տարբեր փուլերում փորձարկվողների արտաբերման կարողությունների ցուցանիշների փոփոխությունը (աղյուսակ 1):

Աղյուսակում ներկայացված է փորձարարական ուսումնասիրության արդյունքում փորձարարական և ստուգողական խմբերում ներառված լսողության խանգարում ունեցող երեխաների արտաբերման հիմնական կարողությունների (խոսքային շնչառություն, ձայնի կարգավորում, հնչարտաբերում, խոսքի առոգանաարտահայտչական կողմ) փոփոխման ցուցանիշները: Համաձայն որի ակնհայտ երևում է, որ անցկացրած գիտափորձից հետո դրական ցուցանիշներ ենք գրանցել փորձարարական խմբում, որոնք էականորեն տարբերվել են

ստուգողական խմբի ցուցանիշներից: Օրինակ՝ ուսումնասիրման նախնական փուլում փորձարարական խմբի երրորդ աստիճանի լսողության խանգարում

Աղյուսակ 1

Փորձարկվողների արտաբերության զարգացման հիմնական ցուցանիշների փոփոխությունը


Ուսումնասիրվող ցուցանիշները	Զարգացման աստիճանը	Լսողության խանգ. աստիճանը	Հետազոտվող խմբեր							
			Փորձարարական խումբ n=14 (5-III°, 9-IV°)				Ստուգողական խումբ n=13 (5-III°, 8-IV°)			
			Մինչ գիտափորձը		Գիտափորձից հետո		Մինչ գիտափորձը		Գիտափորձից հետո	
			n	%	N	%	n	%	N	%
Խոսքային շնչառություն	Նորմա		III°	2	40	5	100	3	60	
			IV°	3	33,3	7	77,8	4	50	
	Խանգարում		III°	3	60	-	-	2	40	
			IV°	6	66,6	2	22,2	4	50	
Ձայնի կարգավորում	Նորմա		III°	1	20	5	100	1	20	
			IV°	3	33,3	7	77,8	2	25	
	Խանգարում		III°	4	80	-	-	4	80	
			IV°	6	66,6	2	22,2	6	75	
Հնչարտաբերում (23 հնչյուն)	Նորմա		III°	1	20	4	80	-	-	
			IV°	2	22,2	8	88,9	1	12,5	
	Խանգարում		III°	4	80	1	20	5	100	
			IV°	7	77,8	1	11,1	7	87,5	
Խոսքի առողանա-արտահայտչա-կան կողմ	Նորմա		III°	1	20	5	100	-	-	
			IV°	-	-	7	77,8	2	25	
	Խանգարում		III°	4	80	-	-	5	100	
			IV°	9	100	2	22,2	6	75	

ունեցող փորձարկվողների 40 %-ի մոտ էր պահպանված խոսքային շնչառությունը, իսկ ուսումնասիրության վերջում այն կազմում էր 100%: Մինչդեռ ստուգողական փուլում համապատասխան ցուցանիշներն էին 60% և 80%: Նմանատիպ ցուցանիշներ ենք գրանցել արտաբերման մյուս կարողությունների ուսումնասիրման արդյունքում: Ստացված բարձր ցուցանիշները գրանցվել են


հատկապես երրորդ աստիճանի լտղության խանգարում ունեցող երեխաների մոտ:

Ներկայացրած արդյունքները ևս փաստում են մեր կողմից առաջարկված հատուկ վարժությունների, համակարգչային խաղերի, գնահատման քարտի արդյունավետությունը:

Փորձարարական ուսումնասիրությանը մասնակցած երրորդ աստիճանի լտղության խանգարում ունեցող երեխաների արտաբերության զարգացման հիմնական ցուցանիշների փոփոխությունները ընդհանուր առմամբ ներկայացված է տրամագիր 1-ում: Նմանատիպ ցուցանիշներ ենք ստացել նաև չորրորդ աստիճանի լտղության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերական կարողությունների ուսումնասիրման արդյունքում:



ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԽՈՒՄԲ



ՄՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԽՈՒՄԲ

Տրամագիր 1. Փորձարարական ուսումնասիրության տարբեր փուլերում III^o հետազոտվողների արտաբերական կարողությունների հիմնական ցուցանիշների փոփոխությունը՝ ■ - մինչ գիտափորձը, ■ - գիտափորձից հետո

1 – խոսքային շնչառություն, 2 – ձայնի կարգավորում, 3 – հնչարտաբերում (23 հիմնական խմբի մեջ մտնող հնչյուն), 4 – խոսքի առոգանաարտահայտչական կողմ

Տրամագրից պարզ երևում է, որ մեր կողմից առաջարկված և գիտափորձում ներդրված համակարգչային խաղերի, հատուկ վարժությունների ու հանձնարարությունների կիրառումը տվեց դրական արդյունք: Մինչ գիտափորձը փորձարարական խմբում նորմալ էր զարգացած երեխաների 40%-ի խոսքային շնչառությունը, իսկ գիտափորձից հետո ցուցանիշը 60%-ով ավելացավ, այն դեպքում, երբ այդ ցուցանիշները ստուգողական խմբում կազմում էին 60% (մինչ գիտափորձ) և 80% (գիտափորձից հետո): Նմանատիպ ցուցանիշներ ենք ստացել նաև արտաբերման մյուս կարողությունների ուսումնասիրության արդյունքում:

Ուսումնասիրության արդյունքները ցույց տվեցին, որ III°-ի (5 երեխա փորձարարական խումբ, 5 երեխա ստուգողական խումբ) և IV° -ի (9 երեխա փորձարարական խմբում, 8 երեխա ստուգողական խմբում) լսողության խանգարում ունեցող երեխաների մոտ գիտափորձից հետո դիտվում էր համեմատաբար պահպանված արտաբերություն: Դա այն դեպքում, երբ համապատասխան ցուցանիշները բավականին ցածր էին նախքան գիտափորձը՝ հատկապես IV° -ի լսողության խանգարում ունեցող երեխաների մոտ:

Այս երեխաների արտաբերական կարողությունների զարգացմանը նպաստող մեր կողմից առաջարկված խաղերն ու հանձնարարությունները մասնագետների և ծնողների կողմից դիտարկվել են որպես հետաքրքրություն և ակտիվություն առաջացնող, սուրդոմանկավարժական աշխատանքի արդյունավետությունը բարձրացնող, համապատասխան նպատակին ծառայող միջոցներ:

Այսպիսով՝ ուսուցանող մանկավարժական գիտափորձը հաստատուն կերպով վկայում է այն մասին, որ առաջարկված համակարգչային խաղերի, միջոցների, մեթոդների ներմուծումը թույլ տվեց փորձարարական խմբի հետազոտվողներին ավելի լավ զարգացնել խոսքային շնչառությունը, ձայնի կարգավորումը, խոսքի առոգանարտահայտչական կողմը, քան իրենց՝ ստուգողական խմբի հասակակիցները: Ընդհանուր առմամբ՝ մանկավարժական գիտափորձից հետո փորձարարական խմբի 95,0 % (III°) և 80,5 % (IV°) լսողության խանգարում ունեցող երեխաների մոտ նկատվել է նորմային համապատասխան արտաբերություն, այն դեպքում, երբ ստուգողական խմբում երեխաների թիվը կազմում էր ընդհանուր թվի ընդհամենը 65,0 % (III°) և 56,2 % (IV°):

Եզրակացություն

Լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության զարգացման վերաբերյալ հատուկ գիտամեթոդական գրականության վերլուծությունը, սուրդոմանկավարժների առաջատար փորձի ուսումնասիրությունն ու մեր հետազոտության արդյունքները թույլ տվեցին կատարել ստորև բերված հետևությունները.

1. Ուսումնասիրվող հիմնահարցն արդիական է: Չնայած հատուկ գրականությունում և գործնական պարապմունքներում մեծ ուշադրություն է հատկացվում, բայց լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության ձևավորման ու զարգացման հիմնահարցը կարիզ ունի կատարելագործման: Լսողության խանգարում ունեցող երեխաների արտաբերական կարողությունների գնահատման և արդյունքների գրանցման քարտի, հատուկ համակարգչային խաղերի բացակայությունը և փորձարարությամբ հիմնավորված չլինելը դժվարեցնում են այս երեխաների արտաբերական կարողությունների զարգացման պարապմունքների կազմակերպումն ու անցկացումը: Այս հարցերի ուսումնասիրումն ու մշակումը, կիրառման

արդյունավետության փորձարարությամբ հիմնավորումը կնպաստի այս երեխաների հետ սուրդոմանկավարժական աշխատանքների կազմակերպման և անցկացման արդյունավետությանը, որն էլ որոշում է հետազոտության արդիականությունը, տեսական և գործնական նշանակությունը:

2. Հաստատված է, որ լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության զարգացմանը բնորոշ են մի շարք առանձնահատկություններ (օդի հոսքի ուղղության պահպանման խանգարումներ, խոսքային ձայնի փոփոխության կարողության խանգարումներ, փաշխման խանգարում, հնչարտաբերման խանգարումներ, տրամաբանական շեշտի պահպանման խանգարումներ և այլն), որոնց հաղթահարումը կնպաստի այս երեխաների արտաբերության զարգացմանը: Սակայն հարցման արդյունքները փաստում են, որ մասնագետների 37,1 %-ը և ուսանողների 71,9 %-ը իրագեկ չեն արդի միջոցներից, չեն կիրառում գնահատման քարտեր, համակարգչային խաղե, որն էլ բացասաբար է ազդում այս երեխաների արտաբերության ձևավորման և զարգացման վրա:

3. Ատենախոսությունում ներկայացվել է մեր կողմից ընտրված, մշակված և համակարգված հատուկ վարժություններ, հանձնարարություններ, մշակվել է լսողության խանգարում ունեցող երեխաների արտաբերական կարողությունների (խոսքային շնչառություն, ձայնի կարգավորում, հնչարտաբերում, խոսքի առճգանաարտահայտչական կողմ) ձևավորմանն ու զարգացմանը նպաստող օրինակելի համակարգչային խաղ ծրագիր, արտաբերական կարողությունների գնահատման և արդյունքների գրանցման քարտ: Ութամսյա մանկավարժական գիտափորձի արդյունքները հիմնավորվել են առաջարկված մոտեցումների բարձր արդյունավետությամբ:

4. Ուսուցանող մանկավարժական գիտափորձում մեր կողմից առաջարկված համակարգչային խաղերի, հատուկ վարժությունների, հանձնարարությունների օգտագործումը նպաստեց լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության զարգացման մակարդակի բարելավմանը: Այսպիսով՝ մանկավարժական գիտափորձից հետո փորձարարական խմբի 14 հետազոտվողների (III° -5, IV° -9) մեծ մասին (համեմատած մինչ գիտափորձի արդյունքների հետ) բնորոշ է արտաբերության զարգացման հիմնական ցուցանիշների բարելավում: Օրինակ՝ փորձարարական խմբի (III° -5, IV° -9) լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների 100 % -ին և 77,8 % -ին բնորոշ է խոսքային շնչառության զարգացում, ձայնի կարգավորում, խոսքի առճգանաարտահայտչական կողմի զարգացում, դե իսկ 88 % և 88,9 % -ին հիմնական խմբի մեջ մտնող 23 հնչյունների արտաբերություն: Ստուգողական խմբի 13 հետազոտվողների (III° -5, IV° -8) արտաբերության ուսումնասիրվող ցուցանիշներում դրսևորվող դրական ցուցանիշները համեմատաբար ավելի քիչ էին արտահայտված:

5. Անցկացված հետազոտությունների արդյունքները վկայում են Լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների արտաբերության զարգացմանը նպաստող մեր կողմից առաջարկված համակարգչային խաղերի, վարժությունների, հանձնարարությունների, գնահատման քարտի արդյունավետության մասին:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված են հետևյալ հրատարակումներում.

1. **Մուրադյան Ս. Ս.** Լսողության խանգարում ունեցող նախադպրոցական երեխաների խաղի դերն ու առանձնահատկությունները: Գորիսի պետական համալսարանի միջազգային II գիտաժողովի աշխատանքների ժողովածու .- Գորիս. – 2011.- էջ 704-707:

2. **Մուրադյան Ս. Ս.** Լսողության խանգարում ունեցող երեխաների արտաբերական կարողությունների գնահատման քարտ // <<Զանգակ>>.- Երևան.- 2012.- 24 էջ:

3. Азарян Р. Н., **Мурадян С. С.** Характеристика уровня развития произношения у детей дошкольного возраста с нарушением слуха // Մանկավարժական միտք .- Երևան .- 2013.- № 1-2.- էջ 258-262:

4. **Մուրադյան Ս. Ս.** Լսողության խանգարում ունեցող երեխաների ճիշտ արտաբերության ձևավորման և զարգացման առանձնահատկությունները // Մխիթար Գոշ .- Երևան.- 2013.- № 7-9.- էջ 97-100:

5. **Մուրադյան Ս. Ս.** Լսողության խանգարում ունեցող երեխաների արտաբերական կարողությունների զարգացմանը նպաստող արտասահմանյան և հայկական համակարգչային խաղ-ծրագրերի դերն ու նշանակությունը // Մանկավարժական միտք.- Երևան.- 2015.- № 1-2.- էջ 267-272:

6. **Мурадян С. С.** Анализ постановки работ по развитию произношения у дошкольников с нарушением слуха. / *Международная научно-практическая конференция. Педагогика и современные аспекты физического воспитания.*- Краматорск .- ДДМА.- 2015.- № 2.- С. 118-124.

7. **Muradyan S. S.** Main dimention, aspects and content of surdopedagogic work to form and develop correct pronunciation among preschool hearing-impaired children // *European Science and Technology: 10th International scientific conference.*- Munich.- 2015.- P. 51-57.

8. **Մուրադյան Ս. Ս.** Չլսող երեխաների արտաբերման զարգացմանը նպաստող արդի տեխնոլոգիաների կիրառումը ներառական կրթության պայմաններում // <<Ներառական կրթություն. ժամանակակից խնդիրներն ու մարտահրավերները>> միջազգային գիտագործնական գիտաժողովի հողվածների ժողովածու.- Երևան.- 2015.- էջ 86-89:

9. Азарян Р. Н., **Мурадян С. С.** Основные принципы и положения построения и проведения сурдопедагогической работы по формированию и

развитию правильного произношения у детей с нарушением слуха / The Global Partnership on Development of Scientific Cooperation Limited Liability Company Science and Innovations in the Globalized World The Collection of Scholarly Papers. Published in the United States of America. San Diego, CA. 2016. P. 57-62

10. **Мурадян С. С.** Экспериментальное обоснование эффективности рекомендованных подходов для развития произношения у детей с нарушением слуха. Н 34 Научная дискуссия: вопросы педагогики и психологии. сб. ст. по материалам XLVI междунар. науч.-практ. конф. – № 1 (46). Включен в систему Российского индекса научного цитирования (РИНЦ). ISSN 2309-2742 Часть II. – М., Изд. «Интернаука», 2016. – С.29-32.

МУРАДЯН СВЕТЛАНА СЕРГЕЕВНА

СРЕДСТВА И МЕТОДЫ РАЗВИТИЯ ПРОИЗНОСИТЕЛЬНЫХ НАВЫКОВ У ДОШКОЛЬНИКОВ С НАРУШЕНИЕМ СЛУХА

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.03 – “Специальная педагогика”.

Защита состоится 16 июня 2016г. в 12⁰⁰ часов на заседании специализированного совета 020 ВАК “Педагогика” по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, Ереван, ул. Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Известно, что дошкольный возраст играет важную роль в общем развитии как нормально развивающихся детей, так и в развитии детей с нарушением слуха. Нарушение слуха отрицательно сказывается на формировании и развитии речи, произносительных навыков, затрудняет процесс усвоения знаний и речевое общение, отрицательно влияет на общее развитие и становление личности.

Недостаточная изученность постановки сурдопедагогической работы с этим контингентом детей, отсутствие экспериментально разработанных средств, методов, специально разработанных армянских компьютерных программ и оценочных программ по развитию произношения с нарушением слуха детей, затрудняют решение этой важной проблемы. Поэтому экспериментальная разработка сурдопедагогических подходов для развития произносительных навыков у дошкольников с нарушением слуха является весьма актуальной, теоретически и практически значимой.

Цель исследования - разработка средств и методов развития произношения у детей с нарушениями слуха дошкольного возраста.

Задачи исследования:

1. изучить современные подходы развития произношения детей с нарушениями слуха дошкольного возраста;
2. выявить особенности обучения произношения у дошкольников с нарушением слуха в специальных учреждениях;
3. выявить уровень развития произношения у дошкольников с нарушением слуха;

4. разработать средства и методы для развития произношения у дошкольников с нарушением слуха и экспериментально обосновать их эффективность.

Научная новизна исследования:

- изучены задачи в сурдопедагогической работе в специальных учреждениях по развитию произношения у дошкольников с нарушением слуха
- изучена постановка сурдопедагогической работы в специальных учреждениях по развитию произношения у дошкольников с нарушением слуха
- разработана оценочная карта для оценки произношения у дошкольников с нарушением слуха;
- разработаны компьютерные игры, специальные упражнения и задания для развития произношения у дошкольников с нарушением слуха и экспериментально обоснована их эффективность.

Теоретическая значимость исследования заключается в скорректировании и дополнении информации о эффективности применения рекомендованных упражнений, заданий и компьютерных игр по развитию произношения у дошкольников с нарушением слуха, а также результатов экспериментальных исследований.

Материалы диссертационного исследования в определенной степени дополняют специальную педагогику новыми теоретическими сведениями.

Практическая значимость исследования определяется разработкой оценочных карт, компьютерных игр, специальных упражнений, заданий, для развития произношения у детей с нарушением слуха и внедрением их в практику работы сурдопедагогов.

Апробация результатов исследования. Основные положения, результаты и выводы исследования докладывались и обсуждались на совместных заседаниях кафедр специальной педагогики и психологии, логопедии и восстановительной терапии (2011-2014), “Арабкир” МК Институт Здоровья Детей и Подростков “АВАТ” - общественной организации матерей детей с нарушением слуха (г. Ереван) и его филиал в г. Арагшате (2012 – 2013гг). По теме диссертации опубликовано 10 статей.

Структура диссертации. Работа состоит из введения, трех глав, выводов, списка использованной литературы и приложений. Диссертация изложена на 149 страницах компьютерного текста, содержит 7 таблиц, 10 рисунков и 6 приложений.

SVETLANA S. MURADYAN

**THE WAYS AND METHODS OF IMPROVING PRONUNCIATION SKILLS
OF PRESCHOOL-AGED CHILDREN WITH HEARING IMPAIRMENT**

Thesis submitted for the Degree of Candidate (PhD) of Pedagogical Sciences,
Specialty Area: 13.00.03 “Special Pedagogy”.

The official defense of the thesis will be held at 12 am on June 16, 2016, at the sessions of Special Board 020 HAC (Pedagogy) to award degrees under Kh. Abovyan Armenian State Pedagogical University, address: 0010, Tigran Mets avenue 17, Yerevan.

SUMMARY

The relevance of the research. Pre-school age plays an important role in the overall development of both normally developing children and children with hearing impairment. Hearing loss adversely affects formation and development of speech, pronunciation skills, complicates the process of assimilation of knowledge and speech communication, has a negative impact on the overall development and formation of personality.

However, insufficient knowledge of surdopedagogical field with the children, the lack of application of experimentally developed ways and methods and special Armenian software, designed for the development of children’s pronunciation, as well as scorecards significantly hinder the solution of this important problem. That is why the experimental development of surdopedagogical approaches, ways and methods of improving pronunciation skills in preschool-aged children with hearing impairment is of utmost importance, both theoretically and practically.

The aim of the research. Development of tools and methods for improving pronunciation of preschool-aged children with hearing impairments.

Research objectives are the following:

1. To study modern approaches to improving pronunciation of preschool-aged children with hearing impairments;
2. Identify features of pronunciation teaching in preschool children with hearing impairments in special schools;
3. To identify the development level of pronunciation skills of preschool children with hearing impairments;

4. To develop tools and methods for development of pronunciation skills of preschool-aged children with hearing impairment and experimentally prove its efficiency.

The scientific novelty of the research is:

- Problems in surdopedagogic work, carried out in special facilities to develop pronunciation in preschool children with hearing impairment, studied
- Setting surdopedagogical work in special facilities, with the aim to develop pronunciation in preschool-aged children with hearing impairment, studied.
- A scorecard (rubrics), designed to assess pronunciation of preschool-aged children with hearing impairments.
- Computer games, special exercises, targets for development of pronunciation skills of preschool-aged children with hearing impairment, studied and its efficiency, proved experimentally.

The theoretical significance lies in the addition information is set up by the efficiency of recommended exercises, tasks and computer games, designed to improve pronunciation skills of preschool-aged children with hearing impairment, as well as by the results of testing.

Research materials enrich special pedagogy with new theoretical data to some extent.

Practical significance of the research is set by development of scorecards (rubrics), computer games, special exercises, tasks aimed at improving pronunciation skills of children with hearing impairment and introducing them in practice of surdopedagogic work.

The approbation of the results of the research. The main issues, results and conclusions of the research have been reported and discussed at joint meetings with Chairs of Special Pedagogy and Psychology (2011-2014), 'Arabkir' JMC, Audiological center Maternal and child health Armenian alliance (Yerevan) and branch in Artashat (2012 – 2013). 10 articles, covering the topic of the thesis have been published.

Thesis' structure: The dissertation consists of an introduction, three chapters, conclusions, references used and appendix. The dissertation is written on 149 pages of computer text and contains 7 tables, 10 images and 6 appendices.